

25.05.2011թ.

գ. Անտառամեջ

Հիմք ընդունելով ՀՀ Գեղարքունիքի մարզպետի 2011թ. հունվարի 21-ի թիվ 5-Ա կարգադրությունը՝ հանձնաժողովը նախագահությամբ մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ Իվան Ասատրյանի, անդամությամբ՝ աշխատակազմի քարտուղարության պետ Յուրա Թաթարյանի, աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետի տեղակալ Ավետիք Գասպարյանի, նույն վարչության ՀԳՄՏՍԳՀ բաժնի վարիչ Հրանդիկ Օհանյանի, աշխատակազմի զարգացման ծրագրերի բաժնի վարիչ Վարդուհի Մնացականյանի, աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ Վանիկ Պողոսյանի վարչական հսկողության շրջանակներում ուսումնասիրեց մարզի Անտառամեջ համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի /Բորիս Բայան, աշխատում է 1999թ./ 2009-2011թթ. գործունեությունը:

Ուսումնասիրվեցին ներքոհիշյալ բնագավառները՝

*1. Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը հրավական ակտերի ընդունման բնագավառում*

Համայնքի ավագանին 2009թ. գումարել է 4 նիստ, կայացրել է 7 որոշում: 2010թ. գումարել է 6 նիստ և կայացրել է 10 որոշում, 2011թ. անցած ամիսներին գումարել է 3 նիստ և կայացրել է 4 որոշումներ: Համայնքի ղեկավարը 2009թ. ընդունել է 5 որոշումներ, 2010թ.՝ 8-ը, 2011թ.՝ 6-ը: Արձակել է կարգադրություններ՝ 2009-2011 թվականներին՝ 26-ը:

Աշխատակազմի քարտուղարը չի արձակել որևէ հրամաններ, քանի որ աշխատակազմի մյուս համայնքային ծառայողի տեղը թափուր է /առաջատար մասնագետ, ծածկագիր՝ 3.1-1/: Պետք է նշել, որ համայնքի ավագանու նիստերի գումարումը հրականացվել է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջների խախտումներով, այն է՝ համայնքի ավագանու նիստերը գումարել, ոչ ուշ քան երկու ամիսը մեկ պարբերականությամբ:

Ավագանու 17.01.2009թ. թիվ 1 նիստում քննարկվել է համայնքի 2008թ. բյուջեի կատարումը, նույն նիստի թիվ 2-րդ որոշմամբ հաստատվել է համայնքի 2009թ. բյուջեն /2587.0 հազար դրամ եկամտային և նույնքան էլ ծախսային մասերով/:

Ավագանու 03.04.2009թ. թիվ 2-րդ նիստի թիվ 3-րդ որոշմամբ հաստատվել է համայնքի զարգացման 2009-2012թթ. ծրագիրը:

03.07.2009թ. թիվ 3-րդ նիստի թիվ 5 որոշմամբ քննարկվել և հաստատվել է համայնքի բյուջեի 2-րդ եռամսյակի կատարողականը /որը կազմել է 116%/:

05.10.2003թ. թիվ 4-րդ նիստում քննարկվել է 3-րդ եռամսյակի բյուջի կատարողականը:

14.01.2010թ. թիվ 1 նիստը լսել է 2009թ. բյուջեի կատարման մասին գյուղապետի հաշվետվությունը, իսկ 2-րդ որոշմամբ հաստատել է համայնքի 2010թ. բյուջեն /4003.0 հազար դրամ եկամտային, նույնքան էլ ծախսային մասերով:

Ավագանու 26.01.2010թ. թիվ 2-րդ նիստի թիվ 2-րդ որոշմամբ հաստատվել է համայնքի ղեկավարի աշխատակազմի հաստիքացուցակը, թվաքանակը և դրույքաչափերը /հաստատել է 4 միավոր, որից 2-ը համայնքային ծառայողներ են/:

10.03.2010թ. թիվ 3 նիստը որոշել է փոփոխություն կատարել համայնքի բյուջեում և ֆոնդային բյուջեից 192.0 հազար դրամ հատկացվել է խմելու ջրագծի վերանորոգման համար:

30.06.2010թ. թիվ 4-րդ նիստում լսվել է <<ՇԵՆ ԲՋԿ-ն>>, <<ՍԻ ԷՅՋ ԷՖ ԻՆԹՎ>> կազմակերպությունների հետ համայնքի փոքրածավալ ենթակառուցների վերանորոգման ծրագիր իրականացնելու նպատակով նախաձեռնող խումբ ստեղծելու հարցը:

25.07.2010թ. թիվ 5 նիստում լսվել է համայնքի 2010թ. բյուջեի առաջին եռամսյակի կատարողականի հարցը:

13.01.2011թ. թիվ 1 նիստում քննարկվել է 2010թ. բյուջեի կատարողականի մասին հարցը, որտեղ արձանագրվել է, որ 2010թ. բյուջեն կատարվել է 88.3%-ով, նույն նիստի թիվ 2-րդ որոշմամբ հաստատվել է 2011թ. բյուջեն /4005.0 հազար դրամ եկամտային և նույնքան էլ ծախսային մասերով/:

22.03.2011թ. թիվ 2 նիստի թիվ 3-րդ որոշմամբ փոփոխություն է կատարվել համայնքի բյուջեում, 100.0 հազար դրամ պահուստային ֆոնդից տեղափոխվել է աշխատավարձի ֆոնդին:

14.04.2011թ. թիվ 3 նիստում քննարկվել է համայնքի բյուջեի առաջին եռամսյակի կատարողականը, արձանագրվել է, որ այն կատարվել է 100.5%-ով: Համայնքի ավագանու որոշմամբ իրենց կառուցվածքով, իրավական տեխնիկայի կանոններով չեն համապատասխանում <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի պահանջներին:

Ավագանու որոշումների՝ որպես նորմատիվ կամ անհատական իրավական ակտեր, նախաբանում կամ բովանդակության մեջ նշված չեն թե որ նորմատիվ իրավական ակտի, դրա մասի համաձայն կամ ի կատարումն է ընդունվում: Դրանով իսկ չեն կատարվել <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերի պահանջները:

Ընդունված իրավական ակտերը /որոշումները/ չունեն վերնագրեր, որոնք պետք է՝ համապատասխանեն իրավական ակտի բովանդակությանը և հակիրճ տեղեկատվություն պարունակեն դրա կարգավորման առարկայի վերաբերյալ: Ըստ էության չեն կատարվել <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի պահանջները:

Համայնքի ավագանու կամ գյուղապետի կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերի վրա չեն նշվում <<Ն>> /նորմատիվ/ տառը, բացի այդ դրանք չեն ենթարկվել պետական իրավական փորձաքննության և պետական գրանցման /դրանք են՝ ավագանու կանոնակարգը՝ համայնքի ղեկավարի աշխատակազմի հաստիքացուցակը, թվաքանակը և դրույքաչափերի հաստատումը, համայնքի բյուջեն, բյուջեում կատարվող փոփոխությունները, համայնքի զարգացման ծրագիրը, աշխատակազմի աշխատանքային կարգապահության ներքին կանոնները, աշխատակազմի կանոնադրությունը և այլն/:

Շեղանկապես չի կատարվել <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի պահանջները: Համայնքի ղեկավարի 02.12.2008թ. թիվ 8 որոշմամբ հաստատվել է աշխատակազմի կանոնադրությունը /որը այսօրվա դրությամբ ունի

նոր խմբագրության կարիք/ 15.02.2009թ. թիվ 3-Ա որոշմամբ գյուղապետը հաստատել է աշխատակազմի աշխատանքային կարգապահության ներքին կանոնակարգը, որը նորմատիվ իրավական ակտ է (Ն) և ոչ թե անհատական (Ա):

25.03.2010թ. թիվ 6-Ա որոշմամբ համայնքի ղեկավարը հաստատել է քաղաքացիների ընդունելության կարգը, սահմանվել են նաև ընդունելության օրերը և ժամերը, սակայն ավագանու կողմից չի սահմանվել քաղաքացիների ընդունելության օրերը:

Համայնքի ղեկավարի կողմից ընդունված որոշումներում փոփոխությունները կամ լրացումները չեն իրականացվել /մինչև 2010թ./ <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի դրույթներով: Իրավական ակտերի գործողության դադարեցնելը կամ ուժը կորցրած ճանաչելը չեն իրականացվել նույն օրենքի 71-րդ հոդվածի 1-ին կետի և 72-րդ հոդվածի 1-ին կետի դրույթներով:

## 2. Համայնքային ծառայության բնագավառ

ՀՀ տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006թ. նոյեմբերի 21-ի <<<< Գեղարքունիքի մարզի Անտառամեջ գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելու մասին>> թիվ 205-Ա հրամանով Անտառամեջ համայնքի համար սահմանվել է 2 պաշտոն

1/ աշխատակազմի քարտուղար /ծածկագիր՝ 1.2-1/

2/ աշխատակազմի առաջատար մասնագետ /ծածկագիր՝ 3.1-1/

Նախ պետք է նշել, որ առաջատար մասնագետի պաշտոնը 2 տարի է ինչ թափուր է, այսինքն այն չի համալրվել ՀՀ օրենքով սահմանված կարգով մրցութային եղանակով, որով չի կատարվել <<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին կետի պահանջը:

Համայնքի ղեկավարի 08.01.2007թ. թիվ 1 որոշմամբ համայնքային ծառայողները նշանակվել են պաշտոնների: 15.01.2007թ. թիվ 3 որոշմամբ համայնքի ղեկավարը հաստատել է համայնքային ծառայողների պաշտոնների անձնագրերը:

08.07.2008թ. թիվ 2 որոշմամբ հաստատվել է համայնքային ծառայողների մրցութային և ատեստավորման հանձնաժողովի անհատական կազմը: 22.09.2008թ. թիվ 6 որոշմամբ աշխատակազմի քարտուղարը գործուղվել է պարտադիր վերապատրաստման: 14.02.2009թ. թիվ 2-Ա որոշմամբ, հիմք ընդունելով ՀՀ ՏԿՆ 2009թ. հունվարի 20-ի թիվ 37-Ա հրամանը համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարը ընդգրկվել է համայնքային ծառայության գլխավոր պաշտոնների 2-րդ ենթախմբում, սակայն նրան չի շնորհվել համապատասխան դասային աստիճան:

02.03.2009թ. թիվ 4-Ա որոշմամբ գյուղապետը հաստատել է համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների աշխատակարգերը:

Ուսումնասիրության պահին համայնքային ծառայողի անձնական գործերի վարումը չնայած իրականացվում է, սակայն այն չի համապատասխանում ՀՀ տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006թ. նոյեմբերի 7-ի <<Համայնքային ծառայողի անձնական գործերը վարելու մասին>> թիվ 20-Ն

հրամանով հաստատված կարգի պահանջներին: Աշխատակազմի քարտուղարի անձնական գործերում եկամուտների հայտարարագրման մասին տարածքային հարկային տեսչության տեղեկանքը, որը <<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին կետի <<բ>> ենթակետի պաշտոնից ազատելու հիմք է:

Համայնքում գործավարությունը չի իրականացվում ՀՀ <<ՏԻՄ>> օրենքի 30-րդ հոդվածի պահանջներով:

### 3. Համայնքի սոցիալ-տնտեսական կառուցվածքը և ենթակառուցները

ՀՀ կառավարության 1997թ. թիվ 51 որոշմամբ համայնքին որպես սեփականություն ամրացվել են՝

- 1/ ներհամայնքային խմելու ջրագիծ
- 2/ ներհամայնքային ոռոգման ցանց
- 3/ ներհամայնքային ճանապարհներ
- 4/ աշխատակազմի վարչական շենք
- 5/ գերեզմանոց

Համայնքը չունի մշակույթի տուն, մարզական կառույցներ, գազաֆիկացված չէ, մսուր մանկապարտեզ և այլ ենթակառուցներ, գործում է 1 առևտրի կրպակ:

Բնակչությունը հիմնականում զբաղված է անասնապահությամբ և հողագործությամբ /տնամերձ/:

Անասնաբուժական ծառայությունը իրականացնում է Ձորավանք համայնքի անասնաբույժի կողմից: Համայնքը չունի, ինչպես հասարակական սննդի, այնպես էլ սպասարկման ոլորտի որևէ օբյեկտ: Ներհամայնքային, ինչպես նաև միջհամայնքային ճանապարհները ունեն հիմնանորոգման կարիք:

Հիմնանորոգման կարիք ունի նաև խմելու ջրի ներհամայնքային ջրագիծը:

Համայնքային սեփականության հողատեսքերը /խոտհարք, արոտավայր/ գտնվում են համայնքից 20 կմ հեռավորության վրա և չեն օգտագործվում բնակիչների կողմից:

Ընտանիքների թիվը – 41

բնակիչների թիվը – 149

թոշակառուներ – 60

<<Փարոս>> համակարգում ընդգրկված են – 10

հաշմանդամներ – 2

Համայնքում հաշվարկված են՝

խոշոր եղջերավոր անասուններ - 70

մանր եղջերավոր - 60

մեղվաընտանիքներ - 45

#### 4. Համայնքի ղեկավարի գործունեությունը ֆինանսների բնագավառում

Անտառամեջի համայնքը մարզի սակավահող և փոքրաթիվ ազգաբնակչություն ունեցող համայնքներից է, որտեղ տարեկան ձևավորվում է մինչև 4000.0 հ/դրամ միջոցներ ունեցող վարչական բյուջե և որում սեփական եկամուտները կազմում են ընդամենը 8.0-ից 12.0% կամ գումարային արտահայտությամբ՝ մինչև 500.0 հ/դրամ: ՀՀ պետ բյուջեից ստացված դոտացիան մինչև 2010թ. կազմել է 1500.0-ից 2000.0 հ/դրամ և միայն 2010-2011թթ. հետո է տրամադրվել 3500.0 հ/դրամ:

Այս պայմաններում անգամ, վերջին 5-6 տարիներին, սեփական եկամուտների կատարողականը միշտ ցածր է եղել մարզի միջին ցուցանիշից՝ տատանվելով 12.2-ից 33.1%-ի սահմաններում:

Բերենք համայնքի 2009-2010թթ. և 2011թ. 4 ամիսների բյուջեների եկամուտների ծախսերի վերաբերյալ հաշվետվական տվյալները.

Եկամուտները	2009թ.			2010թ.			2011թ.		
	պլան	փաստացի	%	պլան	փաստացի	%	պլան	փաստացի առ1.05.11թ.	%
Հողի հարկ	3200.0	311.1	97.1	250.0	256.2	102.5	250.0	127.0	50.8
Գույքահարկ	17.0	22.2	130.6	17.0	22.2	130.6	17.0	5.2	30.6
Հողի վարձավճար	250.0	209.0	83.6	236.0	165.2	70.3	238.0	-	-
Այլ եկամուտներ	-	110.0	-	-	-	-	-	-	-
Ընդ. սեփ. եկամուտներ	587.0	652.3	111.1	503.0	443.3	88.1	505.0	132.2	26.2
Դոտացիա	2000.0	2000.0	100.0	3500.0	3500.0	100.0	3500.0	1166.7	33.3
Ընդամենը եկամուտներ	2587.0	2652.3	102.5	4003.0	3943.6	98.5	4005.0	1298.9	32.4
Բյուջետային ծախսեր	2587.0	2542.4	98.3	4003.0	3943.6	98.5	4005.0	1297.0	32.4
ա/ թվում՝ Աշխատավարձ.	1920.0	1690.0	88.0	3060.0	2602.0	85.0	2200.0	737.0	33.5
Սոցվճար	490.0	226.1	46.1	603.0	729.9	121.1	1400.0	460.0	32.9
Գործուղում	-	-	-	300.0	297.7	99.2	300.0	100.0	33.3
Պահուստային ֆոնդ	177.0	-	-	40.0	-	-	105.0	-	-
ԴԱՀԿ որոշ. տարված գումար	-	626.3	-	-	314.0	-	-	-	-

Բերված տվյալներից նկատելի է, որ բյուջետային ծախսերը հիմնականում կատարվում են ՀՀ բյուջեից ստացված դոտացիաների հաշվին:

Համայնքում տարեկան հաշվարկվում է 154.0 հ/դրամ հողի հարկ: 2009թ. հունվարի 1-ի դրությամբ առկա է եղել 737.0 հ/դրամ հողի հարկի ապառք, որի հաշվին ավելացել են հողի հարկի պլանային և փաստացի գումարները մինչև 160.0 հ/դրամ/ չափով: Հողի հարկի ~~պարտքերը~~ վերջին տարիներին շարունակաբար նվազել և 2011թ. մայիսի 1-ի դրությամբ կազմում են 386.0 հ/դրամ:

2009թ. հունվարի 1-ի դրությամբ աշխատավարձի հողվածով նախորդ տարիների պարտքերը կազմել են 1608.0 հ/դրամ, սոցվճարի հողվածով պարտքերը՝ 327.0 հ/դրամ:

2009-2011թթ. ընթացքում աշխատավարձի պարտքերից մարում չի եղել, իսկ սոցվճարի պարտքը մարվել է ամբողջովին: Սոցվճարի 327.0 հ/դրամ պարտքերի

նկատմամբ հաշվարկվել են տույժեր, որոնք մայր գումարի հետ միասին գանձվել են ԴԱՀԿ որոշումներով, 2009թ.՝ 322.1 հ/դրամ գումարով և 2010թ.՝ 314.0 հ/դրամ: Վերահաշվարկի արդյունքներով, 2011թ. մարտ ամսին, սոցվճարներից գերավճար է վերադարձվել 31.0 հ/դրամ: Այս պայմաններում, 2011թ. վարչական բյուջեներով պլանավորվել է սոցվճարի հոդվածով 1400.0 հ/դրամ, այն դեպքում, երբ գյուղապետարանում ավագանու որոշմամբ սահմանված 3 աշխատողներին հաշվարկվող 2200.0 հ/դրամ աշխատավարձի համար հաշվարկվում է 463.0 հ/դրամ սոցվճարի գումար:

Գյուղապետարանում խախտվել է 2011թ. համար սահմանված 32.5 հ/դրամ նվազագույն աշխատավարձի չափը և 3-րդ աշխատավարձի համար սահմանվել է ամսական 15.0 հ/դրամ դրույքաչափ: 2009-2011թթ. նախատեսված է եղել 3 միավոր հաստիքներ /գյուղապետ, քարտուղար, հաշվապահ/, որոնց համար 2009թ. սահմանվել են 75.0, 40.0 և 15.0 հ/դրամ ամսական դրույքաչափեր, իսկ 2010-2011թթ.՝ 85065.0 և 15.0 հ/դրամ: Առաջարկվեց 2011թ. համար 15.0 հ/դրամի փոխարեն սահմանել 32.5 հ/դրամ նվազագույն աշխատավարձ, ճշտել սոցվճարի հաշվարկները, ստուգում կատարել հարկային մարմնի հետ:

Ճիշտ է՝ բյուջե հավաքագրված գումարները ուղղվել են միայն աշխատավարձի, սոցվճարի և գույքագրման ծախսերի հոդվածներով նախատեսված ծախսերի կատարմանը, սակայն հաշվապահական հաշվառման իրականացումը հեռու էր բավարար լինելուց:

Առաջարկվեց՝ հաշվապահական հաշվառումը իրականացնել <<Հաշվապահական հաշվառման մասին>> 26.12.2002թ. << օրենքի պահանջներին համապատասխան և հաշվետվությունները ներկայացնել սկզբնական փաստաթղթերի հաշվապահական հաշվառման գրանցումների տվյալների հիման վրա, անկախ, աշխատանքների ու գնումների ծախսերից:

## Ե Ձ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն






Առաջարկել մարզի Անտառամեջ համայնքի ղեկավարին՝

1. տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունվող նորմատիվ իրավական ակտերը համաձայն << <Իրավական ակտերի մասին>> օրենքի 34-րդ հոդվածի պահանջների ենթարկել պետական իրավական փորձաքննության և պետական գրանցման.
2. ընդունվող իրավական ակտերը համապատասխանեցնել <<Իրավական ակտերի մասին>> << օրենքի 37-րդ, 40-րդ և 41-րդ հոդվածների պահանջներին.
3. իրավական ակտերի նախաբանում կամ բովանդակության մեջ (որոշումներ, կարգադրություններ, հրամաններ) նշել թե որ նորմատիվ իրավական ակտի, դրա մասի համաձայն կամ ի կատարումն է ընդունվում տվյալ իրավական ակտը.
4. իրավական ակտերում կատարվող փոփոխությունները, լրացումները, գործողության դադարեցումը, ուժը կորցրած ճանաչելը կամ չեղյալ համարելը իրականացնել <<Իրավական ակտերի մասին>> << օրենքի 70-րդ, 71-րդ, 72-րդ և 75-րդ հոդվածների դրույթներով.

5. պահպանել ավագանու նիստերի գումարման պարբերականությունը, այն է՝ ոչ ուշ քան երկու ամիսը մեկ անգամ.
6. ՀՀ օրենքով սահմանված կարգով, այն է՝ մրցութային եղանակով, համալրել աշխատակազմի առաջատար մասնագետների /ծածկագիր՝ 3.1-1/ թափուր պաշտոնը.
7. ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետի դրույթով, աշխատակազմի քարտուղարին շնորհել ՀՀ համայնքային ծառայության 2-րդ դասի խորհրդականի դասային աստիճան.
8. համայնքային ծառայողների անձնական գործերը վարել համաձայն ՀՀ ՏԿՆ 7.11.2006թ. թիվ 20-Ն հրամանով հաստատված կարգի և պահանջների.
9. աշխատակազմի քարտուղարի անձնական գործերում տեղակայել նրա կողմից ՏՀՏ տրված գույքի և հայտարարագրերի հայտարարագրման մասին տեղեկանքը, քանի որ դրա բացակայությունը պաշտոնից ազատման հիմք է.
10. հաշվապահական հաշվառումն իրականացնել «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան, ճշտել սոցվճարների հաշվարկները, փոխադարձ ստուգում կատարել հարկային մարմնի հետ.
11. աշխատակցի նվազագույն աշխատավարձը ՀՀ օրենքով սահմանված կարգով չպետք է պակաս լինի 32500 դրամից:

Առաջարկություն - տեղեկանքը քննարկել մարզպետի նիստում, նախապատրաստել մարզպետի որոշման նախագիծ և առաջարկել տեղական ինքնակառավարման մարմիններին քննարկելու իրենց գործունեության մեջ տեղ գտած թերությունները և միջոցներ ձեռնարկելու դրանց շտկման ուղղությամբ:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ՝

  
 30. 10. 2017  
  
  
  


Ի. ԱՍԱՏՐՅԱՆ  
 ՅՌԻ. ԹԱԹԱՐՅԱՆ  
 Ա. ԳԱՍՊԱՐՅԱՆ  
 Հ. ՕՀԱՆՅԱՆ  
 Վ. ՄԱՅԱԿԱՆՅԱՆ  
 Վ. ՊՈՂՈՍՅԱՆ